ԱՆԱՀԻՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի հայցորդ
ՀՏԴ 821.19.0

ՊԵՏՐՈՍ ՄԱՐԿԻ ԿԵՐՊԱՐԸ ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ «ՆԱՒԸ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ» ՎԵՊՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. ավանդույթ, ավանդություն, խորհրդային գաղափարախոսություն, նվիրյալ, մատնանշել, կորցրած ճանապարհ, արտաքին պայմաններ:

Ключевые слова и выражения: традиция, легенды, советская идеология, посвященный, указывать, потерянный путь, внешние условия.

Key words and expressions: tradition, legend, Soviet ideology, dedicated, to point out, a lost way, external conditions.

Կ. Զարյանի «Նաւը լերան վրայ» վեպը տպագրվել է Բոստոնում 1943-ին: Խորհրդային ընթերցողին հասանելի է դարձել միայն 1963-ի հրատարակությամբ: Գրքի երևանյան հրատարակությունը այնպես էր խմբագրվել, որ գրողի մտահղացումից և նպատակադրումից գրեթե ոչիչ չէր մնացել: Արդյո՞ք հեղինակի կամքով էր կատարվել խմբագրումը, թե խորհրդային գաղափարախոսության պարտադրանքի արդյունք էր՝ տարբեր կարծիքներ են հնչել:[1] Հոդվածի նպատակը այս հարցին անդրադառնալը չէ:

2005 թվականից այս ստեղծագործությունն ընդգրկվել է դպրոցական ծրագրում և իհարկե ուսուցումը կատարվում է վեպի երևանյան հրատարակության հիման վրա: Պրպտող ուսուցիչը և աշակերտը անպայման կարդում են գրքի նախաբանը, որտեղ Հր. Գրիգորյանը մեկնաբանում և գնահատում է վեպը, անդրադառնում է որոշ կերպարների: Նրա մեկնաբանությունն ու վերլուծությունը կատարվել են խմբագրված տարբերակի հիման վրա, ժամանակի պահանջներին համապատասխան ոգով: Արդյունքում և՛ վեպի, և՛ նրա հերոսների արժեզրկում է կատարվել: Օրինակ՝ գլխավոր հերոսի մասին խմբագիրը հնչեցնում է այսպիսի միտք. «…Արա Հերյանի հայրենասիրությունը որքան էլ ազնիվ է, գործնական, սակայն քիչ էֆեկտավոր, ոչ գործոն հայրենասիրություն է: Հերյանի բոլոր

[1] Հովհաննիսյան Ա., Կոստան Զարյանի «Նավը լեռան վրա» վեպի երևանյան հրատարակությունը, Գրականագիտական հանդես, 2015, ԺԶ, էջ 119:

ազնիվ ձգտումները պիտի դառնան սապոնի պղպջակներ, որովհետև նա չգիտե իր հայրենասիրության ճիշտ կիրառման ուղիները»:[2]

Արա Հերյանը Հայաստան էր եկել սրտի և արյան կանչով՝ իմանալով, որ հայրենիքը օրհասական պայքար է մղում լինելու և ապրելու համար: Գլխավոր հերոսը նախ պետք է ճանաչեր իր երկիրն ու ժողովրդին, հայտնաբերեր Հայաստանը, որպեսզի նվիրվեր նրան: Ճանաչմանը օգնում են վեպի տարբեր հերոսներ՝ յուրաքանչյուրն իր չափով ու իր ձևով: Այս պարագայում կարևորվում է նրանց խոսքը, իսկ գործողությունները մղվում են հետին պլան: Նրանց միջոցով, օրինակ, Հերյանը հասկանում է, որ «Հայի սրտում երկիրը, հայրենիքը միայն անուշ հիշատակ չէ՝ այլ արիւնի հետ շրջող մի ոգեկանութիւն, առանց որի՝ աշխատանք, հարստութիւն, դիրք եւ փառք դառնում են անիմաստ»:[3] Նա պատահական ուղեկցի միջոցով հայտնաբերում է, որ երկիրն ու ժողովուրդը ամբողջություն են կազմում.«… էդ դժբախտ հողերը ճիշդ ու ճիշդ նմանում են մեր ազգին… նոյն ճակատագիրը, նոյն բախտը…»:[4]

Թե ինչ է Հայաստանը, վեպում շատերն են կարծիք հայտնում: Այդ բոլոր կարծիքներն ու մտքերը պատումի ընթացքում մեկտեղվում են և Արա Հերյանի, ինչպես նաև ընթերցողի համար բացահայտում Հայաստան-էությունը: Այս առումով անհրաժեշտություն էր Արա Հերյանի և Պետրոս Մարկի հանդիպումը:

Այս կերպարի մասին Ժ.Քալանթարյանը կարծիք է հայտնում. «Անձնվեր այս հերոսների (խոսքը Միշա Թումանյանի և Բաբկեն Միրանյանի մասին է) կողքին կային նաև Մարկ Պետրոսի նման արկածախնդիր հայեր, ովքեր ազգի մասին մշուշոտ ու վերացական ճառեր էին ասում՝ ծածկելու համար իրենց շահադիտական նպատակները»[5]: Ո՞րն է Պետրոս Մարկի շահադիտական նպատակը: Միգուցե հենց ինքը պատասխանի այս հարցին. «Յիրաւի, սրանք նշանակալից վայրեր են, որոնց հետ հաղորդուելու համար արժում է հազարաւոր կիլոմետրներ ճեղքել անցնել, ինչպէս անցել եմ ես… Նշանակալի՛ց, կարեւորագո՛յն վայրեր են…»:[6] «Ես առանց այստեղ գալու էլ ճանաչում էի իսկական մեր երկիրը, այնպէս ինչպէս նա է… ոչ իբրեւ պարզ տարածութիւն, այլ իբրեւ լուսաւոր եւ

[2] Զարյան Կ., Նավը լեռան վրա, Ե., 1963, էջ XX:
[3] Զարեան Կ., Նաւը լերան վրայ, Բոստոն, 1943, էջ 17:
[4] Նույն տեղում, էջ 35:
[5] Հայ գրականություն, 10-րդ դասարան, Ե., 2005, էջ 116:
[6] Զարեան Կ., Նաւը լերան վրայ, Բոստոն, 1943, էջ 83:

գաղտնի մի կենդանութիւն»:[7] «Ես եկել եմ հեռուներից, լեցւած սրտով, ծարաւ եւ տանջւած… ինքս իմ ետեւից վազելով…»:[8] Ավելի ուշ Ժ.Քալանթարյանը գրում է. «Շատերը գալիս էին հետաքրքրությունից դրդված, ոմանք՝ շահադիտական նպատակներով, ոմանք էլ պարզապես արկածախնդիրներ էին, ինչպես Հնդկաստանից եկած Մարկ Պետրոսը: Իրենց գործով և հայացքներով տարբեր այս մարդկանց Հայաստանը ձգում էր, և Հայաստանում նրանք, այնուամենայնիվ, գտնում կամ վերագտնում էին իրենց հայությունը, հոգով կապվում էին երկրի ու հողի հետ»:[9]

Տարօրինակ է Հր.Գրիգորյանի մեկնաբանությունը. «Հեղինակի և վեպի խոշոր արժանիքներից մեկն էլ այն է, որ շատ դիպուկ կերպով պատկերված են վեպում կեղծ հայրենասիրություն խաղացող մարդիկ: Այդպիսին է, օրինակ, վեպի ամենահյութեղ կերպարներից մեկը՝ Պետրոս Մարկը: Սա օտարության մեջ այլասերված այն հայերից է, որոնք սիրում են ազգասիրական փքուն տիրադներ արտասանել, բայց էականում չարչիներ են, պատրաստ իրենց շահի համար վաճառքի հանել ամեն մի ազգային սրբություն»[10]: Միայն մի եզրակացության կարելի է հանգել այս վերլուծության մասին, որ պրն Գրիգորյանը առնվազը չի հասկացել Պետրոս Մարկի կերպարը:

Այո՛, հետաքրքիր, նույնիսկ տարօրինակ կերպար է Մարկը: Նա քաջ գիտակցում է իր լինելության խորհուրդը և կարծում է, որ Հայաստան աշխարհի համար օրհասական պահին պետք է լինի բնօրրանում: Վեպում չի կարևորվում, թե Մարկը ինչով էր զբաղվում մինչև Հայաստան գալը: Կարևորվում է այլ հանգամանք. նա Հնդկաստանից էր և իր մեջ կրում էր Արևելքի փիլիսոփայությունը, Արևելքի մարդու աշխարհընկալումը՝ բոլորովին տարբեր եվրոպացուց:

Պետրոս Մարկի հետ զրույցից հետո են բացվում նավապետի հոգու աչքերը: Նա իր մտածումներն է վստահում Հերյանին, և ընթերցողը հասկանում է, որ նրա միջոցով հեղինակը կիսում է մեզ հետ իր մտքերը, զգացումներն ու զգացմունքները, վերաբերմունքը ժողովրդի նկատմամբ, ժողովրդին ընկալելու իր կերպը: Ինչպես այդ հնդկահայը, Կ.Զարյանն էլ իրեն օտար էր զգում հայաստանյան կյանքին ու միջավայրին: Նա իր ժողովրդին հեռվից է նայել «ներքին աչքերով… հոգու մօտ բացւած աչքերով»: Ապրելով հեռվում, ժողովրդին ճանաչելով գրքերից ու արյան

[7] Նույն տեղում, էջ 85:
[8] Նույն տեղում, էջ 85:
[9] Հայ գրականություն 12,Ե., 2011, էջ 18:
[10] Զարյան Կ., Նավը լեռան վրա, Երևան, 1963, էջXX:

կանչով՝ Պետրոս Մարկը ստեղծել էր ժողովրդի վերացական-իդեալական կերպարը, որը փնտրում էր հայրենիքում ու չէր կարողանում գտնել: Դրանից նա մեծագույն ցավ է ապրում: Բայց հեռվից նայողը նաև առավելություն ունի. նա տեսնում է շատ ավելին, քան ներսում ապրողը: Նա կարծում է, որ յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր նկարագիրը, որը ձևավորվում է դարերի ընթացքում ձեռք բերած կարողությունների շնորհիվ և արտաքին պայմանների դրական կամ բացասական ազդեցություններից: Այդ նկարագիրը ժողովրդի էությունն է, մնայուն արժեք, որը որպես ճրագ լուսավորում և ուղղորդում է նրա ճանապարհը: Ժողովուրդը պետք է հետևի իր էությունից բխող լույսին՝ չշեղվելով և չդավաճանելով նրան: Պետրոս Մարկը շրջել էր հեգեվարքի մեջ գտնվող Հայաստանում, տեսել գյուղեր, քաղաքներ ու շեներ, նայել ու հասկացել էր՝ մեր ժողովուրդը կորցրել է ոգեղենը, որը խորհրդանշում է դեպի ապագա գնացող ժողովրդի ուղին և պահում է ժողովրդի միասնականությունը:

Հնդկահայը ցավով տեսնում է, որ ժողովուրդը վատնել է ավանդույթները, մոռացել ավանդությունները, որոնք հոգու և էության արտահայտությունն են: Բայց երբ համեմատում է մեր երկիրը Արևմուտքի երկրների հետ, տեսնում է, որ մեր երկիրը պատկանում է «Սրբազան աշխարհագրության», ուր ամեն ինչ պատճառաբանված է՝ ամեն խոսք, շարժում, գործողություն, քանի որ երկիրն ու մարդը հոգեկան միասնություն են կազմել: Ընթերցողը Պետրոս Մարկի միջոցով լսում է հեղինակի կարևորագույն միտքը՝ երբ մեր ժողովուրդը իր երկրի հետ միասնություն էր կազմում, նրա հոգին լուսավորվում էր երկրից բխող լույսով, նա արարում էր տաճարներ, որոնք ցույց են տալիս երկրի ու անձի համադրությունը, առանց որի չի կարող իսկական կյանք լինել: Այժմ այդ հուշարձանները ցույց են տալիս ընդամենը ձգտում, հոգեկան նախադրյալ: Իսկական կյանք ասելով՝ հեղինակը հասկանում է հոգևոր և մշակութային այն կյանքը, որ ունեցել է մեր ժողովուրդը: «Ամէն մի ցեղի կարեւրագոյն նպատակն է… տարածել մարդկայինը եւ տեսանելին՝ տիեզերքի եւ անտեսանելիի մէջ»[11],- ասում է Մարկը (86-87): Մեր ժողովուրդը կարողացել է պայքարել «օձ-աստուածների եւ աստուած-օձերի, դեւերի, կենդանու գլուխներով էակների, ստորերկրեա մոգական կրակի եւ ուրիշ մութ, անարեւային ազդեցութիւնների դէմ», որովհետև գտել էր սեփական ոճը՝ էության կերպն ու խորհուրդը: Շրջելով Հայաստանում՝հնդկահայը տեսել էր վիրավոր տաճարներում ամփոփված Լույսը՝ մեր ժողովրդի՝ երկար դարերի տքնանքի և պայքարի արդյունքը: Մարկը Սևանի հինավուրց վանքում

[11] Զարեան Կ., Նաւը լերան վրայ, Բոստոն, 1943, էջ 86-87:

կրկին տեսնում է Լույսը, իսկ երբ եկեղեցում հանդիպում է նաև Հերյանին, հասկանում է, որ իր առաջ կանգնած է այն նվիրյալը, որին ինքը փնտրում էր: Նա աշխատում է Հերյանին բացատրել. որպեսզի Լույսը լուսավորի ժողովրդին, անհրաժեշտ են նվիրյալներ, որոնք կկարողանան նորից մատնանշել ժողովրդի կորցրած ճանապարհը, այլապես ժողովուրդը դատապարտված է: Պետրոս Մարկի առաքելությունը Հերյան-տեսակին գտնելը և Լույսի խորհուրդը նրան հասցնելն է, իսկ Հերյանի առաքելությունը ժողովրդի առջևից գնալն է՝ Լույսը ջահ դարձրած:

Մարկից է ընթերցողն իմանում, որ մեր ժողովուրդը հայտնվել է անելանելի վիճակում, և դրա համար բոլորովին էլ պետք չէ մեղադրել պատմությունը կամ արտաքին պայմանները: Մեր գլխին թափվող դժբախտությունները մի բացատրություն ունեն միայն. մենք թուլանում, հոգով անզորանում ենք, շեղվում մեր ճանապարհից և դրանով իսկ պայմաններ ենք ստեղծում, որ դժբախտությունները մեկը մյուսի հետևից թափվեն մեր գլխին: Երբ չկա հոգեկան միասնություն, չկա միասնական նպատակ, հնարավոր չէ քայլել միևնույն ճանապարհով: Սա մեր դժբախտությունների և ողբերգությունների պատճառների բոլորովին նոր բացատրություն էր:

Հերյանի հետ զրույցում Պետրոս Մարկը զգուշացնում է, որ ժողովուրդը պիտի կարողանա գիտակցել սեփական կեցության խորհուրդը, որովհետև հենց այդ գիտակցումն է ապահովում ժողովրդի միասնությունը. առանց միասնության կործանումն անխուսափելի է:

Պետրոս Մարկի և Հերյանի հանդիպման ժամանակ հասկանում ենք, թե ինչ մեծ առաքելություն է ծանրացած հերյանների ուսերին՝ հետ բերել հույսը, լուսավորել և ցույց տալ ապագայի ճանապարհը:

Ինչպես տեսնում ենք, այս հնդկահայը փիլիսոփա է և ուսուցանող, ոչ մարտիկ, այդ պատճառով էլ չի կարող իր ուսերին վերցնել այն առաքելությունը, որի անհրաժեշտությունը գիտակցում է, բայց նաև գիտի, որ չի կարող իրականացնել: Նա այն միջոցն է, որով կարևորագույն միտքը Հերյան-տեսակին պետք է հասներ:

Պետրոս Մարկի առաքելությունը Հերյան-տեսակին գտնելը և Լույսի խորհուրդը նրան հասցնելն է, իսկ Հերյանի առաքելությունը ժողովրդի առջևից գնալն է՝ Լույսը ջահ դարձրած:

Այս վեպում իրոք կան գործողություններին չմասնակցող կերպարներ: Նրանց մեծ մասը էպիզոդիկ են, բայց նրանց ներկայությունը անհրաժեշտ է, որպեսզի բացահայտվի և հասունանա գլխավոր հերոսը՝ Արա Հերյանը: Այլ է Պետրոս Մարկի խնդիրը: Նա մտածողն է, վերլուծողը և ուսուցանողը և որպես այդպիսին՝ նրա ներկայությունը անհրաժեշտություն էր և՛ վեպի ասելիքն ամբողջացնելու, և՛ գլխավոր հերոսի կայանալու համար:

Ա. Հովհաննիսյան

Պետրոս Մարկի կերպարը Կոստան Զարյանի «Նաւը լերան վրայ» վեպում

Ամփոփում

Հոդվածի նպատակն է մեկնաբանել Կոստան Զարյանի «Նաւը լերան վրայ» վեպի հերոսներից մեկի՝ Պետրոս Մարկի կերպարը:

Այս վեպը Հայաստանում տպագրվել է 1963 թվականին՝ խորհրդային գաղափարախոսության ներկայացրած պահանջներին համապատասխան խմբագրումներով, ուստի փոխված են վեպի գաղափարը և հեղինակի նպատակը:

Աշակերտներին, ուսանողներին և ուսուցիչներին հասանելի է միայն 1963 թվականի աղավաղված հրատարակությունը և որպես վերլուծություն՝ առաջին հերթին այդ հրատարակության առաջաբանը՝ գրված գրքի խմբագրի կողմից:

Հոդվածի նպատակն է ներկայացնել երկրորդական հերոսներից մեկի՝ Պետրոս Մարկի կերպարը: Ըստ հոդվածագրի՝ այս կերպարը, թեև գործողություններին չի մասնակցում, բայց, որպես մտածող, վերլուծող և ուսուցանող՝ առանցքային նշանակությունունի գլխավոր հերոսի կերպարի կայացման և վեպի գաղափարը բացահայտելու հարցում:

А. Оганесян

Образ Петроса Марка в произведении «Корабль на горе»

Резюме

Цель статьи - комментировать образ Петроса Марка в произведении Костана Зарьяна «Корабль на горе».

В Армении этот роман был напечатан в 1963 году отредактированным в соответствии требованиям советской идеологии, в следствии чего были изменены цель и идея автора.

Ученикам, студентам и учителям доступен только искаженный вариант издания 1963 года, а также, в первую очередь, анализ предисловии издания, написанный редактором книги.

Цель статьи – трактовать образ второстепенного героя Петроса Марка. По мнению автора статьи, хоть и он не учавствует в действиях, но как думающий, анализирующий и обучающий персонаж, имеет ключевое влияние в создании образа главного героя и в раскрытии идеи романа.

A.Hovhannisyan

The character of Peter Mark in the novel “The Ship on the Mountain”.

Summary

The aim of this article is to interpret the character of Peter Mark in the novel “The Ship on the Mountain”.

This novel was published in 1963. The changes in the novel were made according to the requirements of the Soviet ideology. Thus, the main idea of the novel and the author’s purpose were changed.

Only the distorted edition of the novel, published in 1963, and the preface of it, wriiten by the editor, are available to the pupils, students and teachers.

The purpose of the article is to present the image of one of the secondary characters of the novel Peter Mark.

According to the author of the article, this character, though does not participates in the actions of the novel, but as a thinking, an analyzing and a teaching character, is a key influence in the creation of an image of the hero, and in the disclosure of the idea of the novel.